Հավելված N 1
ՀՀ փոխվարչապետի
N 577-Ն որոշման

«ՓԱՌՔԻ ԽԱՉ» ՄԵԴԱԼԻ ՏԵՍԱԿԸ, ՁԵՎԸ ԵՎ ՇՆՈՐՀՄԱՆ ԿԱՐԳԸ

1. «Փառքի խաչ» մեդալը (ձևը կցվում է) շնորհվում է փրկարարական ծառայողներին:

2. «Փառքի խաչ» մեդալը շնորհում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարը (այսուհետ՝ Նախարար):

3. «Փառքի խաչ» մեդալը բաղկացած է 2 մասից՝ ցինկապատ պողպատե հնգանկյուն կախիչից և դրան կապօղակով ամրացած մետաղյա խաչից, որի վրա փռված է 41.5 մմ x 41.5 մմ չափի հավասարաչափ արծիվ՝ կրծքին վահան: 15 x 15 մմ չափերի քառակուսի, ներքևի եզրում լծորդում ունեցող վահանը բաժանված է չորս հավասար մասի. կենտրոնում՝ շրջանի վրա, փորագրված է ջրհեղեղով շրջափակված Արարատ լեռը, գագաթին՝ Նոյան տապանը: Վահանի յուրաքանչյուր անկյունում՝ աջից ձախ, պատկերված են չորս փրկարարական գործողություններ. հրդեհի մարում, փրկարարի օգնություն, ուղղաթիռ՝ աստիճանով, երկու աղավնի՝ ութաթև աստղով:

4. «Փառքի խաչ» մեդալի վրայի արծիվը ոսկեգույն է, որի վեր բարձրացրած թևերը խորհրդանշում են պաշտպանվելու և դիմագրավելու հատկություն: Մեդալի հիմքը խորհրդանշում է խաչը, որի գունավոր չորս հիմնական թևերը բաց շագանակագույն են, իսկ Մասիս սարը և Նոյան տապանը, սև ուրվագծումից բացի, ունեն համապատասխան երանգներ՝ կարմրաբոց հրդեհ, ոսկեգույն փրկարարական պարան, փրկարարական ուղղաթիռ: Ոսկեգույն երանգով պատկերված է փրկարարություն խորհրդանշող ութաթև աստղը՝ քաղաքացիական պաշտպանության եռանկյան կապույտ խորհրդանիշով: Մեդալի կախիչը ասեղային ամրակով է: Կախիչի չափսերն են՝ 39x27x39x24x24, որը երեսպատված է 24 մմ լայնություն ունեցող մետաքսե մուարե նարնջագույն ժապավենով: Ժապավենի երկու եզրերով անցնում են մոխրագույն՝ 1 մմ լայնությամբ զոլակներ: Կախիչի կենտրոնով իրար

զուգահեռ անցնում են 5 մմ լայնությամբ երկնագույն երկու զոլակներ 8 մմ հեռավորության վրա:

5. «Փառքի խաչ» մեդալի դարձերեսի կենտրոնական մասում երեք շարքով, 2.0 տառաչափով առկա է «ՀՀ ՆԳՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» լազերային փորագրությամբ հայերեն գրությունը: Արտաքին տեսքը՝ համաձայն նկարի:

6. «Փառքի խաչ» մեդալի հետ տրվում է վկայական:

<u>Ձև</u>

«Փառքի խաչ» մեդալի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

01.09.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ